

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԽՄԲԱԳԻՐ — ՏԵՕՐԷՆ

ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Փետրուար 26

Թիւ 84 — ԺԱ

هزار آيداق غزنه تسي

HANRAKIDAGUE

Journal Arménien Encyclopédique

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան Պոլսոյ համար

50 Դր.

Գաւառաց համար

60 ,

Արսասահման

15 Ֆր.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շաբաթական Գրոհիկ

Քննադատական (1900ի Հնդարձակ Օրացոյցը)

Ցաւոս Եօթեր

Հովանոցի մը պատմութիւնը

Վիպակ (Իսկային հասած)

Ամուսնալոյծն՝ ապերջանիկ

Երկրագործութիւն

Բ. Պ.

Ա. Պիլի-ձեւն

Թ. ԼԱՊՃԻՆձԵԱՆ

Ս. ԲԱԲԷԼԵԱՆ

»

Բ. Պ.

40 փարա 40

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ կը ծախուի: 1. Գասրգիւղ, Արմեն ԷՖ. Զպուգնեանի Դեղարանը. — 2. Սամաքիա, Կայարանին մօտ, ծխականառ ծառութիւն Աղա Էժէսեհանեանի խանութը. — 3. Կամուրջի գլուխը, ջրավանառ Նեան աղա Օզուգնեանի փոլ (նախկին ջրավանառ Պողոս աղայի խանութը). — 4. Զրավանառ Սեփան աղայի խանութը. — 5. Մարգարեան, Պալենց, Ասենեան եւ Զարդարեան գրատուններ. — 6. Բոյնս յազրավանառներուն փոլ:

Գաւառներէ ո՛վ որ կը փափաքի ՀԱՆՐԱԳԻՏԱԿի գործակալութիւնն ստանձնել, կրնայ ուղղակի Տնօրէնութեանս դիմել:

ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Էսկի Զապթիկ հասցեայ Թիւ 61

1900

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Մեր պատուարժան բաժանորդներուն ծանուցումները ձրի կ'ընդունուին հինգ անգամուան համար:

Ով որ հաճի բաժանորդագրուիլ մէկ տարուան համար, վեցամսեայ վճարելով հանդերձ, կրնայ իր ծանուցումները հրատարակել տալ ձրի:

Գրքերու հեղինակներն եթէ չկը փափաքին իրենց երկերը ծանուցուած տեսնել Հանրագիտակի մէջ, կրնան երկերէն օրինակ ղրկել Տնօրէնութեան:

ԻՆՉ Է

ԻՍԴԵՐԻՆ

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԻՐ ԴԱՐՄԱՆՆԵՐԸ

Ժողովուրդին համար գրուած

Թարգմ. Դերմանեհեհե

Ն. Կ. ՆԱԶԻԿԵԱՆ

ԳԻՆ 5 ՂՐԾ.

Նաղիկեան էֆ., որ անընդհատ կը շարունակէ Դերմանեհեհե կարգ մը օգտակար գրքերու թարգմանութիւնն ու հրատարակութիւնը, որոց ամենքն ալ ժողովուրդին օգտին համար գրուած են ժողովրդական հեղինակներու կողմէ, այս անգամ իւրոյս ընծայած է շատ պիտանի գիրք մը եւ միանգամայն շատ ի դէպ մանաւանդ հիմա որ ջլագրագութիւնն իր ծայրագոյն աստիճանին հասած է մեր մէջ: Կը յանձնարարենք այս պիտանի գիրքը մեր ընթերցողներուն, որք կարդալով պիտի սովորին թէ արդի յոռի դաստիարակութեան աղետաբեր հետեւանքներէն մին է «Իսդէրին»: Ա՛հ, որքան «Իսդէրիք» կ'ինել, օրիորդներ, երիտասարդներ ունինք հիմա: Թող փութան գնել մէկմէկ հատ, որպէս զի գաղափար ունենան իրենց հիւանդութեան, անոր պատճառներուն և դարմաններուն վրայ:

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՄԵԾ ՏՈՒՆ ԹԷՅԻ



Կ. ԵՐԱՐՈՒԵԱՆ

Վ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՄԵՆԱՌԱՆԱԿ ՃՈՒ ՄԹԵՐԲ

գերընտիր եւ ամէն ճաշակի յարմար

Որոշ եւ հափաւար զին

Պահե՛ք զաբու, ձէլալ պէյ խանի սակ

Թէ՛ Պոլսոյ և թէ՛ գաւառի մեր պատուարժան ընթերցողներուն կը յանձնարարենք սոյն վստահելի վաճառատունն, որ երկար տարիներէ ի վեր պատուաւոր դիրք մը գրաւած է, և ամէն տարի չի զլանար իր թէյի նուէրը՝ ի նպաստ կարօտելոց:

Վստահաբար դիմեցէ՛ք և պիտի չգըղձաք:—Վաճառատան մարգային ուշ դրէ՛ք:

Գործ. Քերականութիւն Ծրանս. լեզուի

Գին 7 ՂրԵ.

Ո՛վ որ կը փափաքի հմտանալ Ֆրանս. քերականութեան բոլոր նրբութիւններուն, կրնայ վստահաբար առնել Պօզաճեան Ծրանս. Քերականութիւնը, որ պատրաստուած է Լաոուսի, Կէրասի, Լարիվի և Պաշէի քերականութեանց հետեւողութեամբ, և բազմապիսի հրահանգներով ճոխացած:

Կը ծախուի բոլոր գրավաճառներու քով: Կեդրոնատեղին է Հանրագիտակի Տնօրէնութեան քով:

ԿԱՐԵԻՈՐ ԱԶԴ

Հանրագիտակի Տնօրէնութիւնը կրնայ հայթայթել բոլոր վարժարաններու պէտք ունեցած դասագիրքերը, եղած յանձնարարութեանց ճիշդ համաձայն: Ամէնէն մեծ գեղջը կուտայ, առանց ո եւ է շահու ալկակալութեան: Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք. — Մի՛տ կանխիկ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական



ԽՈՐՀԱՐՈՒՄ — ՏԵՕՐԷՆ
ԲԻԻԶԱՆԿ՝ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Փետրուար 26

Թիւ 84 — ԺԱ

ՃԱԲԱԹԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ՄԻԶՍԶԳԱՅԻՆ

ԿԱՅՈՒԹԻՒՆԸ



ՆՁՊԼԻՍ երբեմն Հռովմայ Ծերակոյտին մէջ, երէցն կատոն իր արտասանած մէն մի խորհրդարանական ճառին իբր վերջարան յանկերգի մը պէս կը կրկնէր, delendo Carthago, «կործանելու է Կարթեդոնը», այնպէս ալ Անգլիացի նոր կատոնը, ռազմաշունչն Զէմպրլէն, իր քաղաքական մէն մի ճառը կը կնքէր ըսելով. կործանելու է Օրանժն ու Թրանսվալը: Կարթեդոն, Ափրիկէի ծովեզրին վրայ, սեսակ մը ազնուապետական հանրապետութիւն էր, որոյ հին տեղը կը յիշեցնէ այժմեան Թունուզը, եւ որ Ափրիկէի մէջ եւ Միջերկրականի

վրայ Հռովմէական լայնածաւալ կայսրութեան աւելի ընդարձակուելուն դէմ խոչընդոտ կը նկատուէր: Հիմակ ալ Օրանժ ու Թրանսվալ, այս երկու քոչոր հանրապետութիւնք, նոյն այն Ափրիկէի ուրիշ մէկ մասին մէջ նոր Կարթեդոն մ'են Բրիտանական կայսրութեան համար որ ինքզինք կը դաւանի իբրեւ ժառանգորդ Հռովմէական հին կայսրութեան: Անգլիա սարսափով կը տեսնէր այդ երկու նիզակակից հանրապետութեանց բարդաւաճումը, ինչպէս հին Հռովմ սարսափով կը դիտէր զԿարթեդոն, որմէ ազատուելու միակ ապահով միջոցն էր քար քարի վրայ չձգել, հիմնադրատակ կործանել զայն: Ինչպէս գաղթային անզուսպ նախարարը կը գոչէր. «ձեռքերնիս արօրին վրայ դրինք, ալ չենք կրնար ետ քաշել», պէտք է հեկել ու հնձել Օրանժն ու Թրանսվալը, այնպէս ալ ահա արօրը տակաւ կը յառաջանայ խոր ակօսներ բանալով Պօէրական կարգերուն մէջ:

Գրոնժէ զօրավարին գերի խնայէն վերջ, Գրիւկէր ծերունի նախագահին հանած վերջին կորովալիք յայտարարութիւնն, որ Թրանսվալի բոլոր բնակիչ-

ները, այդ, կին, ծեր, տղայ, դուռնի տակ
ի գէն կը կոչէ, ցոյց կուտայ թէ Պօէր-
ներն ալ հին կարգեգոնացուց պէս ի-
րենց միտքը հաստատ դրած են ցյեախն
չունչ կուտիլ Բրիտանեան բանակներուն
դէմ: Անգլիա Պօէրական յամառութեան
կրազեկ ըլլալուն համար է որ անդուլու
անդադար կը շարունակէ իր զինուորա-
կան պատրաստութիւնները, զի պատե-
րազմական նախարարը շարժուա խոր-
հրդարանին մէջ յայտարարեց թէ մին-
չեւ Մարտի վերջը 58000 նոր զինուորներ
եւս պիտի հասնին Հարաւ-Ափրիկէ: Եւ-
րոպա, թէեւ Անգլիոյ ելմտական նախա-
րարին բերնէն իսկ կը լսէ Բրիտանեան
կայսրութեան այս տարուան ելեւմտա-
ցոյցին վիթխարի բացը, — 43 միլիոն
անգլ. ոսկի, — սակայն ապշութեամբ
կը գիտէ թէ Անգլիա, որ ալ ծերացած
կը համարուէր, ո՞րպիսի արտասովոր կո-
րով մը ցոյց կուտայ եւ ի՞նչպիսի գիւ-
թութեամբ ի հանդէս կը բերէ նոր նոր
բանակներ, թէեւ զինուորական պար-
տաւորիչ կազմաւորութիւն չունենայ:
Եւ հիմակունէ կը հարցնեն թէ Բրի-
տանեան յաղթական բանակները, Օ-
րանժն ու Թրանսվալն արօրադրելէ
վերջ, ո՞ր պիտի ուղղուին: Անգլիա յար-
մար առիթը եկած պիտի համարի՞ հին
ու նոր հաշիւներ կարգադրելու: Դէպ-
քերը միայն պիտի տան այս հարցման
պատասխանը: Առաջիմ գաղթային նա-
խարարն անդործ չի մնար, Բրիտանեան
գաղութներուն կը հարցնէ թէ ի հարկին
դեռ ո՞րչափ զօրք կրնան տալ Մայր-
Հայրենեաց: Աւստրալիոյ գաղութը 12000
կը պատասխանէ: Գոնատա ալ նոյնչափ
տալու պատրաստականութիւն կը ցուցնէ:
Ի՞նչ է այս նախահոգ պատրաստու-
թեանց նպատակը, լոկ պոռոտախօսա-
կան սնամէջ ցոյց մ'է եթէ ոչ թա-
գուն նպատակ մ'ունի: Ի՞նչ որ ալ, որն
ալ ըլլայ, Բրիտանեան նորանոր յաղթու-
թիւնը ո՛չ միայն կ'սկսին պատկա-

ռանք ազդել Եւրոպիոյ, այլ եւս ուրիշ
անուղղակի արդիւնք մ'ալ կ'ունենան,
այն է՝ միանդամ ընդ միշտ ի վեր կը
հանեն սա ճշմարտութիւն թէ տկար
ազգերու հանդէպ Եւրոպեան ժողո-
վուրդներու ցոյց տուած համակրու-
թիւնը լոկ համակրութիւն ըլլալէ անդին
չեն անցնիր, գործնականի մէջ կը վի-
ժին, եւ վա՛յ անոնց որք այդ պղատո-
նական համակրութիւններէն քաջալեր-
ուած՝ կը նետուին կորստեան անդունդը:
Մարդասիրութիւնը չէ՛ արդի քաղա-
քագէտներու աշխարհավարութեան ա-
ռանցքը, այլ նիւթական շահը: Լա-Հէի
դեսպանատնիւրհուրդն ալ, աիեզերական
խաղաղութեան վսեմ նպատակին հա-
մար գումարուած, մարդասիրութեան
մարմնացումը պիտի չկրնայ ըլլալ, քանի
որ ահա Գերման խորհրդարանին մէջ այս
պահուս կատարուած վիճարանութիւնը
ակներեւ ցոյց կուտան թէ Գերմանիա
խաղաղութեան ընդհանուր դատին հա-
մար չէր դացած հոն, այլ իր մասնաւոր
շահերը պաշտպանելու համար: Գերմա-
նիա խաղաղութիւն կ'ուզէ, կը գոչէ Մ.
Պիւլով, բայց չի կրնար երախտաւորել թէ
ուրիշ մը վաղ կ'ամ անագան պիտի չպար-
տաւորէ զինքը խաղաղութիւնը խզելու,
եւ ասոր համար անհրաժեշտ է որ մին-
չեւ ակռաները զինուի, որքան ցամաքի
նոյնքան ծովու վրայ: Ուրեմն եւ-
րոպա երբեք պիտի չկրնայ պատե-
րազմն արգիլել, եթէ երկու հա-
կառակորդներէն մին անպատճառ ուզէ
զէնքով լուծել վէճը: Քանի որ այսպէս է
եւ այսպէս պիտի ըլլայ միշտ, տկարե-
րը միշտ ահուգողով պիտի տեսնեն զօ-
րաւորներուն տակաւ զօրացումը, եւ
վա՛յ ժողովուրդներուն որ արդի աշխար-
հավարութեան ա՛յս հարկին ծանրու-
թեան ներքեւ պիտի կրին միշտ, ծան-
րածանք պարտքերու եւ տուրքերու եւ-
թարկուելով անընդհատ: Ի. Պ.

Ք Ն Ն Ա Դ Ա Տ Ա Կ Ա Ն

1900ի

Ը Ն Դ Ա Ր Զ Ա Կ Օ Ր Ա Ց Ո Յ Ց Ը

Հիւանդանոցի Պատ. Հոգաբարձութիւնն ուղեւորով նորութիւն մ'ընծայել հասարակութեան, ներկայ տարուան Ընդարձակ Օրացոյցը հրապարակ հանեց ծաւալով և պարունակութեամբ սովորական ամբիւններու օրացոյցներէն շատ տարբեր ձեւի մը տակ, գործին պատրաստութեան հոգն յանձնելով Հրանտ էֆ. Ասատուրի:

Թէ ո՞ր աստիճան ընդունելութիւն գտաւ այն նոր հրատարակութիւն, թէ կրցա՞ծ ծախքերը գոցել և չա՞մ մ'ալ թողալ Ազգ. բազմակարօտ Հաստատութեան, չենք գիտեր, սակայն ապահով ենք որ Հայ հաստատութիւնն իր պարտքն այս անգամ ալ կատարեց, քաջալերելով ի նպաստ Հիւանդանոցին եղած այսպիսի բարենպաստակ հրատարակութիւն մը: Մեր քննելիք գըլ-խաւոր կէտը սա պիտի ըլլայ թէ գրքին հեղինակը կրցա՞ծ է յաջողիլ իր յանձնառութեան մէջ, Պիտի չծանրանանք գրքին ընդհանուր ուղղութեան թերութեանց, նիւթերու ամենախնդճ զաստիարգութեան և դարձեալ նիւթոց, ըստ մեծի մասին, անճշակ ընտրութեան վրայ. մեր քննադատութեան առարկայն պիտի ըլլայ մի միայն առաջին հատուածը զոր հեղինակը, խոշոր վերնագրով մը, կը կոչէ՝ Եկեղեցական, Դրացական, Բարեգործական, Գրական, Դիտական, Արուեստագիտական քուականգներ, ԺԲ եւ ԺԺ. դարերու Հայ տարեգրութիւններէն քաղուած, և զոր կը ներկայացնէ ընթերցողներուն՝ իբր նշանակաւ ուսումնասիրութիւն մը:

Արդար ըլլալու համար պէտք է ըսենք թէ ներկայ քննադատութիւնը կարելի է գոյութիւն իսկ չունենար՝ եթէ երկու պարագաներ անոր ծնունդ չտային:

Ա. Այն հրաւերը զոր գրքին հեղինակը կ'ուղղէր ընթերցողաց, իրենց դիտողութիւններն հաղորդելու Հիւանդանոցի գրասենեակը մինչեւ այս ինչ թուական, նշանակելով զանոնք գրքին կցուած էջերուն:

Վրայ. Թիրաւի պատշաճից օրէնքը հարկ կը դնէր մեր վրայ խոնարհիլ այս համոտ խնդրանաց առջեւ, բայց շատ անգամ պատշաճագոյնը հարկին տեղի կուտայ, ինչպէս որ ալ եղաւ այս առթիւ, վասն զի կցուած էջերն անբաւական եղան.....

Երկրորդ պարագան եղաւ Սուրհանդակ օրաթերթին 273 և 274 թիւերով երեցած երկայն քննադատական, որ աւելի գովասանք մ'էր քան անաչառ քննադատութիւն, և բացի քանի մը անցողիկ դիտողութիւններէ, յօդուածագիրը չէր վարանած ներկայացնել զայն իբր խնամեալ ախտաւորին մը, եւ մեզի այնպէս մտածել տուաւ թէ յօդուածագիրն աւելի ժամանակ չէր ունեցած նոյն ուշադրութեամբ քննելու գրքին առաջին հատուածն ալ, ինչ որ ըրած էր Հայ եկեղեցի վերնագրով հատուածի մասին: Ինչպէս որ ընթերցողը պիտի տեսնէ, ջանացինք ընդհանուր դժերով ներկայացնել առաջին հատուածին քննադատելի այն ամէն կէտերն որք, զէչ ըմբռնմամբ կամ աճապարանօք, ամբողջ գործին ամէնէն տկար մասերը կը կալմեն և, ահա՛ այս մասին մէջ է որ կը վխտան ամէն կարգի սխալներ որոց գլխաւորները պիտի ցուցնենք կարգաւ:

* * *

18րդ եւ 19րդ դարերու հայ տարեգրութիւններէն քաղուած քուականգ այս հատաքածոյին մէջ չեն յիշուիր՝

Թուրքիոյ Հայոց ամէնէն արժանաւոր ուսուցչապետը՝ Ռ. Յ. Պէրպէրեան, որ քսանհինգամեայ վարժարանովն ազգին մտաւոր զարգացման մեծագոյն սատարողն եղած է:

Թուրքիոյ Հայոց ամէնէն մեծ հրապարակագիրը՝ Մամուրեան որ իր երեսնամեայ Մամուլով մեծ բաժին ունեցաւ այս ընդհանուր զարգացման մէջ:

Հայ լեզուի բանասիրութեան ու գրականութեան ինչպէս նաեւ Հայ եկեղեցոյ ամէնէն արժանաւոր ներկայացուցիչներէն մին՝ Նիկիէ Նպո. Դուրեան՝ որ կրթական-կրօնական Հաստատութեան մը գլուխն անցած, իրական ծառայութիւն կը մատուցանէ, արժանաւոր հիւղեցականներու դասեր ընծայելով ամէն տարի ամենակարօտ աղգին:

Դարձեալ այս տարեգրութեան համար գոյութիւն չունի՝ Գէորգ Տէր-Յովհաննէս-

եան (անուանեալն Գէորգ-Դպիր Պալաթցի) այր բազմահմուտ, հայագէտ և հելլենագէտ, արեւելագէտ և մանաւանդ քաջ պարսկագէտ, անուանի ո՛չ միայն իր անունեալի, այլ համայն բանասիրական աշխարհի երախտեաց արժանացած այս հետաքննին բանասէրն, որ անսովորաբար պիտի մնայ յաւիտեան՝ Եւսեբիոսի Քրոնիկոնի հայերէն նախնեաց թարգմանութեան ձեռագիր միակ օրինակին գիւտովը։

* * *

Այս հռչակաւոր տարեգրութեան յիշատակարանին մէջ կան դէմքեր որք սխալ ներկայացուած են, ինչպէս՝ Ծերենց (Տքթ. Շիւմանեան) կը ներկայացուի իբր ասեմաբան, Ծերենցը՝ հրապարակագիր կը հասկնամ. բայց ատենաբան գծադրարար ոչ... Բնութիւնը զլացեր էր իրեն այս ձիրքը։

Հայր Կղէմէս Սիպիլեան կը ներկայացուի իբր հնագէտ. պէտք էր ըսել դրամագէտ։

Հայր Ղուկաս Ինճիճեան վարդապետ կ'երեւի մեզ իբր քերթող։ Հայ Մատենադրութեան պատմութեան մէջ այս անուամբ քերթող չի կայ։

Եթէ շարունակենք մեր ընթերցումը, շատ աւելի մեծ անակնկալներ պիտի ունենանք, և յիշաւի, վասն զի 18^{րդ} և 19^{րդ} դարերու հայ հեղինակաց շարքին մէջ Հայր Արսէն Վ. Կ. Բաղրատունի կը ներկայացուի իբր տաղաչափ։

Ինչպէս տաղաչափ կ'անուանուի 19^{րդ} դարուն ամէնէն մեծ Հայ բանաստեղծն, որ հրաշալի լեզուաւ թարգմանեց Հոմերոս Իլիականը, Միլտոնի Կորուս դրախտին, Վիրգիլեայ Մեակականքը, Հուգոնի Փոսկոլեայ Կեդեգմանաց տաղերը, ամէն դարերու և ամէն ազգերու ամէնէն մեծ քերթուածները*։

Յովհաննէս Զօհրապ Մխիթարեան վարդապետը կը ցուցուի իբր աւիստակից Հայկազնեան Բառգրքին և թարգմանիչ՝ Հայերէնէ ի Լատին լեզու՝ Եւսեբիոսի Քրոնիկոնի։

* Կ'երեւի Թէ Հրանտ էֆ. զրաբարի - Էֆ. չըլլալով, չէ կրցեր հասկնալ այս հրաշալիքներուն արժէքը. յանցանքը Հայր Արսէնին է դարձեալ, որ ուշխարհաբար չէ գրած ու թարգմանած իր երկերը, մանաւանդ ո՛րչափ լաւ կ'ընէր եթէ չ'ընէր լեզուաւ գրէր։

Առաջինը բոլորովին սխալ է, Յով. Զօհրապ վարդապետ աշխատակցած չէ Հայկազնեան Բառգրքին։ Այս հսկայ աշխատութիւն ի գլուխ հանեցին երեք վարդապետք՝ Հ. Գ. Աւետիքեան, Հ. Խ. Սիւրմէլեան և Հ. Մ. Աւգերեան։

Գալով Եւսեբիոսի Քրոնիկոնի լատին թարգմանութեան, այս կէտին մէջ ալ չփութութիւն մը կայ, վասն զի Եւսեբիոսի Քրոնիկոնի հայերէնէ լատին թարգմանութիւնը կրկին է, միևնոյն ժամանակները տպագրուած։

Հ. Մ. Աւգերեան ըրաւ այս թարգմանութեանց առաջինը չոր հրատարակեց 1818ին ի Վենետիկ, Ս. Ղազարու վանքը։ Այս թարգմանութիւնն անուանի է իր հաւատարմութեամբ, բազմահմուտ ծանօթութեամբ եւ անկորուստ մնացած յունական բնագրին հատուածներովը զորս թարգմանիչը միացուց հայկական հին թարգմանութեան հետ։

Իսկ երկրորդ թարգմանութիւնն ըրաւ Հ. Յ. Զօհրապ Մայ Անճէլօ գիտնականին հետ որ Միլանու մատենադարանին պետն էր. այս թարգմանութիւնն ալ երկուցու միևնոյն տարին. այն ժամանակին քննադատներուն կարծեօք, Աւգերեան թարգմանութիւնը կը գերազանցէր իր մրցակիցը՝ բնագրին պահած հաւատարմութեամբ, մինչդեռ Զօհրապեան - Մայեան թարգմանութիւնը լատիններէն լեզուի մասին աւելի յաջողած էր։

* * *

Վերջապէս յանուն 18^{րդ} և 19^{րդ} դարերու հայ տարեգրութեան կանգնուած այս յիշատակարանին մէջ ո՛րչափ շահեկան կ'ըլլար յիշել Հայ լեզուի ու Գրականութեան իրենց մատուցած ծառայութեամբ՝ հռչակաւոր եւրոպացի հայագէտներն ու բանասէրներն իրենց գլխաւոր աշխատասիրութիւններով, փոխանակ անոնց անունը, ծննդեան և մահուան թուականները միայն տալով բաւականանալու. կարծես թէ այս յաւելած երախտեաց արժանի հեղինակները պէտք էր որ ծնած ու մեռած ըլլային օր մը Հրանտ էֆ. ի պատրաստած Տարեգրութեան ցանկին մէջ թուական մը, լոկ թուական մը ձեւացնելու համար։

Այսպէս, օրինակի համար, ո՛րչափ շահագրգիռ կ'ըլլար գիրքն եթէ յիշէր՝

Հիւզիւման՝ Սեբեոսի պատմութեան գերմաներէն թարգմանութեամբը՝

Հերման Գուտշմիդ գերմանացին՝ Ագաթանգեղոսի վրայ իր քննադատութեամբը՝

Էօթէն Պօռէ՝ Մովսիսի Կաղանկատուացւոյն Աղուանից պատմութեան ֆրանսերէն թարգմանութեամբը՝

Վ. Լանկուա՝ հնագէտ ֆրանսացին, քաջածանօթ իր ուղեւորութեամբը անուանի հայագէտն, որ ֆրանսերէնի թարգմանեց նախնեաց մատենագրութեան պատմական հրաշակերտներն, որպէս Ագաթանգեղոսը, Փաւստոս Բիւզանդացին, Զենոր Գլալը, Կորիւնը, Մովսէս Սորենացին, Եղիշէն, Ղազար Փարպեցին, որոնք հրատարակուեցան Հաւաքմունք Հայ Պատմագրաց՝ անուան տակ՝

Պրոսէ՝ բազմապատակ ֆրանսացին թովմայ Արծրունւոյ, Սամուէլի Երիցու պատմութեանց ֆրանսերէն թարգմանութեամբը՝

Բեդերման՝ լատին լեզուաւ ընդարձակ հայերէն քերականութեամբը՝

Լը Վայան տը Ֆլօրիվալ՝ ոչ նուազ անմոռանալի, Եզնկայ Եղծ Աղանդոցն և Մովսիսի Սորենացւոյն պատմութեան ֆրանսերէն թարգմանութեամբը՝

Ֆրետերիք Միլլէր՝ Հայ լեզուին վրայ իր բազմաթիւ լեզուարանական գրութեանցով՝

Պ. Տըլակարդ՝ հայկական լեզուի ուսումնասիրութեամբ հռչակաւոր Գերմանացին՝

Էտ. Տիւօրիէ՝ հանրածանօթ քաջ հայագէտ ֆրանսացին, որ իր Հաւաքմունք խաչակրաց պատմաց անուն գործոյ շարքին մէջ հրատարակեց Մատթէոս Ուռհայեցւոյ, Միքայէլ Ասորւոյն և Ներսէս Լամբրոնացւոյն ֆրանսերէն թարգմանութիւնները՝

Ֆէլիքս Նեւ Պելճիգացին, յոյժ անուանի՝ Հայոց եկեղեցական պատմութեան եւ դպրութեան վրայ ընդարձակ և խորաքննին գործովը՝

Նայման արեւելագէտն՝ որ գերմաներէնի թարգմանեց Եղիշէի Պատմութիւնը՝

Հէնրի Գելլեր, անուանի՝ Հայ եկեղեցւոյ սկզբնաւորութեան վրայ իր գործովը՝

* Հանգուցեալ Նուպար փաշա սոյն ստուար գործին հրատարակութեան ծախքը հոգաց։

Սողոմոն Մալան՝ բողոքական երէցն, ծանօթ՝ հայկական աղօթից և հոգեւոր երգոց անգլիերէն թարգմանութեամբ և Ս. Գրիգոր Լուսաւորչի ընդարձակ կենսագրութեամբը։

* * *

Դարձեալ սոյն Յիշատակարանին մէջ ո՛րչափ անփառունակ և անժպիտ կը կանգնին դէմքերը՝

Նուպար փաշայի, Ներսէս Աշտարակեցւոյ, Սարգիս վրդ. Թէոդորեանի, Օտեանի և այլոց. փոխան անոնց, Պատրիարքներու, Կաթողիկոսներու հրաժարման, ընտրութեան և վերընտրութեան թուականներն անվերջանալի են։

Հետաքրքիր ընթերցողն ի գո՛ւր պիտի յիշտուէ հոն բոլոր կարեւոր, կենդանի կամ մեռեալ, հայ թերթերու և Հանդէսներու անուններն որոց տեղերը կը գրաւէ անկարեւորներու ստուար խումբ մը. ինչպէս, Սէր լրագիրը (երկու անգամ յիշուած տարբեր թուականներով. տես երես 34 և 66). Ծիածան, Նոյեան Աղլանի, Արեւելեան դար, և այլն։

Բաւական թիւ մ'ալ կը կազմեն անկարեւոր դիպաց և անձանց անունները Աստուծոյ մէջ ամէնէն աւելի ուշադրութիւն կը գրաւէ Գալուստ Կոստանդեան, իզմիրցի այն մեծ զեւկեկը, որ անշուշտ սխալմամբ մտածեալ թիւստակարանին մէջ, նա որ իր ցեղին ամէնէն մեծ նախատինքն ըրաւ, ազգը զրկելով իր մատենադարանը թղթատելու իրաւունքէն։

Այնպիսի յիշատակութիւն մ'ալ կայ, իր տեսակին մէջ մէկ հասիկ, որ օր մը քիչապար պիտի ըլլայ, ահաւասիկ.

«Տիգրան Գարակէօղեան իր մեծ հարստութեան մէկ երրորդը կտակած է Ազգին՝ կրթական նպատակով։ Թէեւ տրուած տեղեկութիւնը ճիշդ, և այնպէս ալ ըրաւ հանգուցեալը, բայց ի՞նչ պիտի ըլլայ հետեւանքն երբ օր մը մեր յաջորդք, այս յիշատակութեան վրայ յենով, երեսն հաշիւ պահանջեն Գարակէօղեան կտակին ապագայ գործադիր մասնախմբէն։

Բառերու սխալ գործածութիւններ ալ չեն պակսիր.

«Տեղի կ'ունենայ Բերայի հրդեհը»։

«Եւրոպա Հանդիսին առաջին թիւը կ'ըսուի հրատարակուի»։

Սիրո՞ւն չէ։

Ա. ՊԻՊԵՌՃԵԱՆ

ՅԱԽՈՑ ՆՕՔԵՐ

Հողին աղիքներուն մէջ քնացող մետաղը բո՛լ տեսնելու է որ մէկդի ձգէ վրան փա-
կած յոռի տարրները :

Թշուառութիւնն ալ մարդկութեան բովն է : Անով գոռո՛ղն է որ ի բաց կը թօթափէ սուտ ու պիղծ մակաբոյծները կեանքի, ստա-
նալու համար ինչ որ բնական է եւ անարատ :

Ո՞ր փայլ աւելի աննենգ քան մաքրուած մետաղինը, եւ ո՞ր նայուածք չի՛ փշիտակ սիրտին խօսող՝ քան տառապանքով լուաց-
ուած մարդունը :

* * *

Տեսայ մարդեր՝ որոնք կարծես վարդե-
րու ամիսին ծնած ըլլային : Անոնք վիշտեր
ունեցան, էութիւնը ցնցող եւ հոգին ճարթ-
կող մեծ վիշտեր : Բայց զէմքերնին նոյնը
մնաց, մը՛շտ խնդում :

Ի ծնէ անհոգները... : Կեանքի դառնու-
թիւնը անոնց վրայ կարկուտ եղաւ ու ցատ-
կեց ինկաւ, մինչ մեր ուսերուն ձիւն կ'ըլ-
լար ու կը փակէր :

Երանե՛ք գիրենք : Պա՛հ, ես ի՞նչ ընեմ
կեանքը որ արցունքի աղովը չէ համոյցած,
եւ զոր չէ կրցած գըրգել յոյգերու ամպոպը :
Այնուհետեւ ի՞նչ վայելք այն յաւիտենական
անիմա՛ստ Զուարթութեան մէջ որ չունի,
չունի երբե՛ք խորութիւն :

* * *

Գութը ապահովաբար լեզու չպիտի հա-
նէր Դրամին, եթէ այս վերջինը չի սրդող-
ցնէր զինքը :

* * *

Ա՛յնչափ վարժուած ենք վիշտին, միո-
րինակութեան ու ձանձրոյթին, անոնցմէ
ա՛յնչափ խմած ու կուշտ՝ որ երբ գիպուա-
ծին զուարթ խաղովը բոպէի մը երջանկու-
թիւն ձեռուընիս անցնի՝ դար մը ապրած ըլ-
լալու պատրանքովը կը սնանինք :

Բոպէի՛ մը երջանկութիւն : Եթէ խոր-
հիս, իրա՛ւ պզտիկ, չնչին բան է. բայց չես
գիտեր ինչո՛ւ, ի՞նչպէս ատիկա կրնայ կոր
մեղմել երկարաձգուած տափակութեան մը
եւ քաշուած տառապանքի մը ամբողջ բեր-
տութիւնը :

* * *

Ամիսներ հողին ներսը մնալ, յետոյ ելլել
եւ խոհանոցի ճենճոտ առաստաղէն խուրձ
խուրձ առկախուիլ, ստկուիլ եւ մահանալ
կրակին վրայ :

Սոխին դանգաւոր լսուած էր, երբ մանա-
ւանդ արցունքներ բերաւ զինքը ջարդող
աչքերէ. — Մարդը աշուտացուց զայն ու թա-
ղարներու մէջ դրաւ Սմբուլ անունով :

Բայց երբ գարունին առաջին ժպիտնե-
րուն՝ իր կանանչ ծիւր դուրս նետեց սոխը,
տեսաւ որ խլուած գողցուած է իր ծաղիկ-
ներուն բուրումնաւէտ ողկոյղը՝ հինգ վայր-
կեանի համար կուրծքերու վրայ լսկելու :

...Մեռնիլը մեռնիլ է միշտ, ըլլայ ան
գիրգ լանջքերու վրայ, կամ իւղոտ տա-
պակներու մէջ :

* * *

Անուրջ մը կ'ունենաս, ոչ թէ այն փա-
խտեայ խօլ անուրջներէն զոր գիշերը կը
չինէ քունին թեւերովը, հապա լո՛ւս աչքի
եւ արթուն միտքի ծնունդ անուրջ մը :

Կը պատմուճանես զայն բոլոր այն չքեղ
դրամանքներով զոր երեւակայութիւնդ իր
արծաթ թելերովը կը հիւսէ : Իղձերդ բուր-
վա՛ն կ'ընես անոր եւ յոյսերդ կանթեղ :

Ու կ'սպասես :

Կ'սպասես ո՞րչափ. — մինչեւ որ կան-
թեղիդ եղը հատնի, հուրը անխանայ բուր-
վառիդ ու տփուռնին նախշուն դրամանքները
առողք երեւակայութեանդ... :

Սաղմնած ու ապրեցուցած անուրջդ ուր-
ջու կը դառնայ այսպէս :

* * *

— Կը յիշե՛ս արցունքներ որոնք բիբերդ
խանձած ըլլան :

Այս հարցումը կար գիշեր մը տան մը
մէջ դարձուած հարցախաղին մէջ, որուն
պատասխանած էին :

— «Նախ կ'երեւակայեմ մայրիկինս, երբ
իր Եւայի երկունքին մէջ՝ Կեանքի պատու-
հանէն ինծի աշխարհը ցուցուց ու գնաց :

«Յետոյ կը յիշեմ իմս, երբ երկուշաբթի
ցորեկ մը Անիկա քօղքած հարս ըրած տու-
նիս առջեւէն անցուցին բաց կառքով մը,
Անիկա՛ որ արեւին վրայ երդում ըրած էր
ուրիշներ չըլլա՛լ յաւիտեանս... »

Պատասխանը գրողը որբ մըն էր ապահո-
վապէս :

R. M. Մայիս 1927

հոգիներ կը դղրդին իրենց դաճաճութեան վայելքը շնչելով :

«Ու հառաչք մըն ալ տակաւին...

«Յանկարծ սազի մը ձայնն ականջիս կը հասնի այս պահուն և ինձմէ քանի մը քայլ հեռու կը տեսնեմ, չըջապատուած քանի մը անձերէ, մուրացկան մը որ անիմաստ եղանակ մը կը նուագէ ու կ'երգէ :

«Իրաւ՝ որ այս մարդն արդիսդ է, կ'ըսէ ձայն մը երբ ես ալ անոնց քովէն կ'անցնէի :

«Օ՛հ, անշուշտ, կը պատասխանէ ուրիշ մը, այս տեղուանքը ասոր պէս արդիսդ չա՛տ :

«Տէ՛ր Աստուած, պիտի կրնամ ստոյիկ մը ըլլալ, կարենալու համար ապրիլ մինչեւ այն օրը ուր կարելիութեանց վերջակէտն եղող մազերուս ճերմակ թելերը ողջունած՝ ա՛լ համակերպութեամբ պիտի մտիկ ընեմ հրէ՛շ մարդերու թէև, բայց վերջապէս այս անարգանքներուն...

.

«Անարգանք» : Բայց ուրիշ ի՞նչ կրնայ սպասել մարդոցմէ գեղարուեստի համար ծնող, գեղարուեստի համար ապրող, այսինքն բազդին ու պարագաներուն ժպիտէն ջնպաստաւորուելու զատապարտուող հոգի մը : Ու Վահէ գեղարուեստի ամէնէն հոգեկան ճիւղին փարած էր, երաժշտութեան՝ երաժշտութեան սուրբ ու վսեմ արուեստին նուիրուած, ժամանակի կարճ տեւողութեան մը մէջ, գրէթէ առանց վարպետի օգնութեան, Վահէ կրցած էր հասնիլ այն կէտին որ ապշեցում պատճառէր վարպետ երաժիշտներու որոնց ներկայացած էր երբեմն : Ատոնցմէ մին չկրնալով ըմբռնել թէ բնածին կարողութիւնը կրնայ ինքնազարգացումը մինչեւ այդ աստիճանին հասցունել երաժշտութեան պէս նուրբ,

բարձր, կնճռոտ արուեստին մէջ, «հրաշք մըն է այս բանը...» ըսած էր : Ուրիշ մը եզրակացուցած էր թէ, եթէ եւրոպա երթար, հայը՝ իրմով՝ մօտաւոր ապագայի մը մէջ միակ հայ դաշնակահար-գօնրօղիթէօւը պիտի ունենար : Եւ ուրիշներ առ հասարակ փառայեղ ապագայ մը պատկերած էին անոր դէմը :

Վկայութիւններ ահա՛ որոցմով Վահէ հեռուն ու մօտը պսակներու մէջ անուն մը ընդնշմարած էր, յոյսեր, երազներ ունեցած և իսեալ մը շինած էր իրեն :

Իր այս շլացնող յափշտակութեան մէջ սակայն օրեր, ամիսներ, տարիներ սահած էին անզգալաբար, մինչև որ գային հասնէին այն տխուր օրերն ալ որոց մէջ Վահէ, հակառակ իրեն, իրմէն արագախոյս հեռանալը սկսէր տեսնել զարգացումի միջավայրին, եռանդին պակսիլը զգար, աշխատութեան տենդոտ տարրին տկարանալը նշմարէր սոսկմամբ, մինչև որ թատերատես ըլլար ներկայացումի՛ն ալ իր ապագային, որ վիհի մը նման լայն բացուելով՝ սկսէր կուլ տալ անյագօրէն իր յոյսերը, երազները, փառքերը, մատնանիշ ընելով այն կատակը զոր խաղցած էր իրեն իր ճակատագիրը...

... Եւ հիմա սենեակին մէկ նսեմ անկիւնը ոչնչացած, ժամերէ ի վեր, անսահմանելի տխրութեամբ մը այս բաներուն վրայ կը խորհէր Վահէ, մարած նայուածքն ակնհայտ սեւեռած հեռաւոր մթնշաղի հորիզոնի մը լանջքին հալող լեռներու վրայ :

Բայց չես գիտեր ի՞նչ տեղի ունեցաւ յանկարծ տագնապալից այդ հոգիին մէջ, աչքերը տարօրինակ կրակով մը փայլիլ սկսան, ելաւ տեղէն, գնաց դաշնակին քովը ու անսովոր ռեգուլարութեամբ մը սկսաւ մրրկել շատ օրերէ ի վեր անկենդան մնացած ոսկորները ու ջիղերը այդ պառկած գործիքին :

Ու դողալ, հեւալ սկսաւ դաշնակը հոգեցունց շեշտերով,
յուսահատի մը տարօրինակ մէկ ներշնչումէն խուժած, ու
սարսռալ սկսաւ դաշնակը ի լուր այն ահաւոր մտածումնե-
րուն և յոյզերուն որ ժամերէ ի վեր կը գոռային այդ դժ-
բաղդ զգայուն էակին վիթրօզի ուղեղին ու հոգիին մէջ:

Ո՛վ խեղճ յուսահատ տղայ, որ դեռ խանդավառութեան
վերապրումներ կ'ունենաս, ուր՝ կարծես անգիտակից ըրա-
ծիդ՝ կ'երթաս դեռ դաշնակ գարնել ու յուզուիլ դաշնա-
կէդ, ապուշի պէս, յիմարի պէս յուզուիլ, հո՛ն՝ այդ ա-
նուրջներու ստեղնաշարին վրայ փճացնելու համար կարծես
աւիւնիդ բեկորները, հո՛ն՝ այդ ցնորքներու ստեղնաշարին
վրայ կարծես շոգիացունելու համար կարողութեանցդ միա-
ցորդը, հո՛ն՝ այդ պատրանքներու և յուսահատութեան
ստեղնաշարին վրայ մարելու համար կարծես վերջապէս
հրդեհիդ առկայծ մէկ պլպլացումն ալ, փութացնելու հա-
մար, անշուշտ, այն օրը ուր ա՛լ հրածեշտ տուած դաշնա-
կիդ՝ ... կեանքիդ, պիտի երթաս դրամ շահիլ, անասունի
մը պէս դրամ շահիլ վաճառանոցի մէջ... գրագրութեամբ
մը հաւանարար:

Յանկարծ դրան «Դըք, դըք՝էն սթափած, Վահէ դադ-
րեցաւ նուագելէ, շուտ մը սրբեց թացցած արտեւանունք-
ները, և «Մտէ՛ք» ըսաւ մեղմ ձայնով մը.

Նիհար, թխորակ երիտասարդ մը ներս մտաւ.

— Բարիբրիկուն, Վահէ՛:

— Ա՛... դո՛ւն ես, Տիրան... եկուր նայինք...

Ու քանի մը խօսքերէ վերջ, լռութիւնը ծանր՝ ինկաւ
մութցած սենեակին մէջ:

Այսպէս էին անոնք գրեթէ միշտ. Վահէ բոլորովին դը-
րաւուած իր ընդածին դժբաղդութենէն, գրեթէ ա՛լ բան

էր ահա Սեւ-Ծովը, երկինքին պէս անո՛ւշ կապոյտ, որուն
մռայլ սեւութեան գաղափարը ա՛լ զիս չպիտի սոսկացնէր:

«Այսօր սակայն լիովին բացատրած եմ ես ինձի ամբողջ
արդարացիութիւնը այդ վայրկեանի տրտմութեանս, որով-
հետեւ հին նախագգացումը ունեցայ ես ապագայի այն օրե-
րու ուր պիտի ստուգէի այս անգամ սեւութիւնը մանկու-
թեանս մէջ կապոյտ երեւակայած բաներուս:

«Եւ սակայն դե՛ռ «երանելի՛ ու քաղցր» կը կոչեն ման-
կութեան օրերը ու անոնց յիշատակը երջանկութեան ու
խանդաղատանքի հառաչներով կ'ողջունեն:

«Ո՛չ, ո՛չ, նախապաշարու՛մ, ցնո՛րք: Մանկութեան օ-
րերը այն ատեն միայն արժանի պիտի ըլլային այս բացա-
գանջութիւններուն ու պատիւներուն, երբ մեզի սեւ գոյ-
ներով ներկայացնէին ապագայի սովէն պատկեր, քանի որ
չպիտի ճանչնայինք այն ատեն յուսախաբութիւնը՝ հոգին
պրկող ու կեանքը թունաւորող այդ զգացողութիւնը»:

«... Եւ խաչ-Յունացին՝ մանկութեանս խաբեպատիր օ-
րերը միտքս ձգող ու ամբողջ յոյսերուս վրայ ծիծաղող այդ
անգութ բարձունքին վրայ կը մնային դեռ բիրբրս գամ-
ուած, պաղած...»

«Չէ՛, ա՛լ չէի կրնար հոն մնալ: Ու ելայ ինքնաշարժ
ոստոմով մը ու սկսայ զառիվայրէն վար վազել՝ հեռանալու
համար հողկէ վայրկեան մը առաջ:

«Դէմս Մարմարան կը ցոլցար Յուլիսի այս արեւուն
վերջալուսային սարսուռներով: Նաւեր կը սուրային հոն,
դէպի զարգացումի, լոյսի երկիրներ դիմող նաւեր, երկիր-
ներ՝ ուր Վահնէրի, Վէռտիի, Պէռլիօզի, Պիզէի, Լիցթիի,
Պէթօվընի պէս հանճարներու վիթրօզներու շունչով վիթ-
խարի շէնքեր կը սարսափին կ'ահաբեկին եւ ուր մարդկային

ԹԵՐՓՕՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ

1340

անիտէալ բազմութեան որ կը խռնուէր հոն և կը խռովէր անոր վայրի ամայութեան լայն խոհանքները :

Այդ շարժումէն հեռու սակայն մինակա տեղ մը գտայ ես գազաթին վրայ դ'պի գառիվայրը , ուր փռուեցայ Չամ-լըճայի միայն յատուկ թուփային բուսականութեան մը գար-նանագեղ կանաչութեան մէջ , շնչելով վայրի բուրումնե-րու կոյս ներդաշնակութիւնը ու թողլով որ նայուածքս հե-ռանայ ինձմէ մինչեւ հեռաւոր տեսարաններուն խորհուրդ-ները , ու երազելով անուշ հովին դէմ որ ալ չէր թողուր մազերուս՝ ծածկել ճակատս , կարծես ըսել ուզելու համար թէ՛ այս ժամուն , բնութեան այդ աննման գեղեցիկութեան հանդէպ , մտածումներս ալ կրնային ազատ ըլլալ ու ալա-նալ զուգընթաց նայուածքիս , որ թռչելով հեազհետէ Գայիշ-Տաղիի լեռանց բարձրաբերձ դազաթներուն , մշտածին ու ամպասոյց Ողիմպոսին ու Ալէմ-Տաղիի առաջնորդող օձա-պտոյտ ճամբուն նկարչագեղ , միամիտ հեռանկարին վրայէն կը թառէր վերջապէս այն խռովիչ բարձունքին վրայ որ խաչ-Յունացն է , և զոր կը թուի մատնացոյց ընել այդ ճամ-բան :

«Օ՛հ , խաչ-Յունացը...»

«Տաքնըհինգ տարի կ'ընէ որ ելած եմ հոն : Աղիէց էր որ առաջին անգամ տեսայ ես Սեւ Ծովը , ուր պահ մը մնացի ապշած ու երազկոտ , կապոյտ գտնելով այն ծովը զոր սե՛ւ , յաւէտ սե՛ւ երեւակայած էի : Ու , կը յիշեմ դեռ , տարօրի-նակ զգացում մը համակեց զիս այդ պահուն , ուր մոռցայ վայրկեան մը զուարթութիւնս մանկական... Ծուռ անցաւ սակայն այդ վայրկեանը , ու ես նորէն վրայէս թոթուած սիրտս սեղմող այդ անհաճոյ զգայութիւնը , տխրութիւնը , վերսկսայ իմ խօլ վազվռտութիւնս ու կանչվռտութիւնս : Եւ ինչո՞ւ տխրէի , ինչո՞ւ , երբ ալ տեսած էի թէ կապոյտ

մը չունէր խօսելիք , խօսած ըլլալով անոր , և անո՛ր միայն ինչ որ կը վերաբերէր իր թշուառութեան : Տիրանէն զատ մէկը չունէր բարեկամ , չկրնալով պատահիլ ուրիշ մեկուն որ ունենար անոր սրտին մաքրութիւնը , աղնուութիւնը : Ու ասկէ սա՛ համոզումը գոյացուցած էր թէ գրէթէ անկարելի էր իրապէս մեծ հոգիի տէր մարդ մըն ալ գտնել , քանի որ է՛ն ազնիւ ծնունդ ունեցող անձերն իսկ դեռ չկազմուած , չանհատականացած՝ կը խաթարուին իրական կեանքին տգեղ բարձրուն իւրացմամբ :

Տիրան ալ կը պաշտէր Վահէն , պաշտում մը՝ հիմնուած անոր հոգիին ու մտքին համար տրամաբանուած հիացումին վրայ :

Երբ ասոնք իրարու հետ , իրարու դէմ ըլլային , ուր Տի-րան Վահէի տխրութեան պատճառաւ մանաւանդ որ նուի-րական էր իրեն համար իր սիրականը կորսնցուցած անձի մը սգաւոր մտախոհութեանը պէս , այո՛ , ուր Տիրան ալ այլեւս տխուր մէկը եղած , կը մնային անխօս ու մտածկոտ՝ այդ մթնոլորտը պիտի թուէր չըլլալ այս աշխարհինը զոր պէտք էր շնչել սակայն համոզուելու համար գոյութեանը բացառիկ , սուրբ , իտէալ էակներու , վէպէն դուրս , իրական աշխարհի մէջ , իրական կեանքէն վե՛ր ապրիլ գիտցող դրե-թէ կրցող :

Երկու շաբաթէ ի վեր եկած չըլլալով , Տիրանի կը թուէր այսօր թէ տարապայման կերպով փոխուած էր իր բարեկամը , ընկճուած սոսկալի յուսահատութեան մը ճըն-շումին տակ : Եւ թէեւ սովորած անոր թախծութիւնը լուռ յարգանքով մը դիտելու , այսօր չկրցաւ զսպել ինքզինքը հարցունելէ :

— Վահէ՛ ... հիւա՞նդ ես :

— Չէ՛ , Տիրան , բան մը չունիմ :

— Ունի՛ս, ունի՛ս... նոր բան մը... , հէ՞, ըսէ՛ վահէ՛ :

— Ինձի համար բոլորովին՝ նոր բան մը չի կրնար պատահիլ, քանի որ, ի՛նչ որ ալ պատահի, իր մէջ պարունակած ճիւղալային անգթութեան նկարագիրովը բոլոր նախորդներուն պիտի նմանի։ Աղէ՛կ գուշակեցիր, բան մը պատահեցաւ, և թերեւս երկու, երեք բան...։ Ու զգուանք կ'ըզգամ թէեւ ասոնց վրայ խօսելուս, բայց ըսեմ, Գանի մը օր առաջ, Պ*** վարժարանին մէջ մրցանակի հանդէս կար։ Հոն դաշնակ զարնելու անդիմադրելի բաղձանքէ մը բռնուեցայ յանկարծ։ Ի՞նչ էր այս բանին պատճառը։ Այդ դպրոցին մէջ վեց եօթն տարի ապրած ըլլա՞լս։ Ոչ, ապահովաբար, քանի որ դպրոցի այդ օրերս չեմ սիրած ես՝ մանկութեանս ու յոյսերուս ալ օրերը եղած ըլլալուն համար...։ Ի՞նչ ուրեմն...։ Չեմ գիտեր...։ Հին օրերու յիշատակներ, տարիներ ետքը այդ դպրոցին մէջ, երազներուս մէջ պատրուած դաշնակ զարնելու անբացատրելի խռովքով մը կը լեցնէին զիս, խռովք՝ որ հրճուանքի պէս բան մը ունէր իրեն մէջ, որ հոգիս կ'ապստամբեցնէր, և որուն գործադրութիւնը ես ինքս պիտի չկրնայի արգիլել մինչեւ իսկ զիս այս բանին մղող պատճառովը...։ Այս տպաւորութեանս տակ կտոր մը ֆօնօգէ ըրի որ շատ բան կը պարունակէր իմ անցեալի եռանդէս, զուարթութենէս ու ներկայի վհատութենէս. այս անկեղծութեանը համար գէթ գեղեցիկ էր ան։ Պիտի նուագէի դայն, բազմութեան մը ներկայութեանը պիտի զարնէի, և ինչո՞ւ չխոստովանիմ, կ'զգայի թէ փառասիրութիւնս ալ մեծ տեղ մը ունէր այս յուզումիս մէջ։ Եթէ չի կրցայ, չարժանացայ նուագահանդէսներու մէջ ունկնդրուիլ, գէթ իմին դպրոցիս մէջ պիտի լսուէի։

— Հէ՛ք տղան, կը խորհէր Տիրան։ Այդ փառասիրութիւնը, բարոյական մէկ մեծ պէտքը արուեստագէտին, ա-

ԻՏԵԱԼԻՆ ՀԱՍԱԾ

Վ Ի Պ Ս Կ

Ա



ԵՆԵԱԿԻՆ ստուերոտ մէկ անկիւնը, հինցած թիկնաթուի մը խորը թաղուած ու իր կիսափակ աչքերուն նուաղկոտ նայուածքը իրիկնամուտի տարտամութեան մէջ մոլորած, անուշ երազանքի մը հրապոյրին անձնատուր եղած ըլլալ կը թուէր վահէ։ Բայց պիտի հասկնանք թէ անիկա իրապէս հոգեյոյզ դառն խորհրդածութեան մը աղջամուղջներուն մէջ կը թափառէր, երբ կարդանք իր օրագիրը զոր գրած է մէկ երկու ժամ առաջ, եւ որ կը մնայ դեռ իր դէմը բացուած, գրադարանին վրայ...

«189... Յուլիս,

«Երէկ Չամլըճա էի։ Միշտ հրաշալի է ան, գրկուած այդպէս աննման տեսարաններէ։

«Բայց հոն տեսլական ժամեր անցունելու յոյսս կը կնճռոտէր ի տես թոհուրոհին ա՛յն հասարակ, դուարճամոլ,

ՀՈՎԱՆՈՅԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ



ԱՒԱՔՈՅԹ մը կազմեր էինք քանի մը գրասէրներ անցեալ գիշեր բարեկամի մը տունը, գրական ժամանցի մը համար զոր սովոր էինք սարքել շաբաթը մէկ անգամ :

Քուէարկութեամբ որոշուեցաւ մեր իւրաքանչիւրին աշխատութեան տեսակը : Մին առաջարկուած նիւթի մը վրայ գրական հատուած մը պիտի շարադրէր : Ուրիշ մը բանաստեղծութիւն մը : Ա. մեր բարձրորուն մէկ թերի կողմը պիտի ներկայացնէր : Բ. պիտի ջանար դիտական այնինչ երեւոյթիւն տրամաբանական լուծում մը տալ : Գ. Մեր ամէնուս ներքին մարդը պիտի յատկանշէր քանի մը գիծերով : Դ. Շարք մը հարցումներու ներքեւ պատասխաններ պիտի գրէր : Եւն :

Բայց այս քուէարկութիւնէն քուէ մը բացը կը մնար , անոր համար որ Լեւոն , զոր մեր բարեկամներէն մին իրեն հետ բերած էր այն գիշերը՝ չէր մասնակցեր մեր խաղերուն :

Այս բացը մնացող քուէով կ'առաջարկուէր նորավէպ մը գրել :

Ամենքս ալ սկսանք պնդել թէ բան մը ընէ , թէ շատ պահանջկատ չէինք և թէ իր կարողութեան չափը շատ իսկ պիտի բլլար մեզ գոհացնելու համար :

—Գրելը իմ գործս չէ , առարկեց , թէ և այս բանը իմ մէկ վիշտս եղած է , ինչու որ կըսիրեմ գրականութիւնը , և ասոր ապացոյցն է իմ այս գիշերուան հոս գալստ : Բայց եթէ թոյլ կուտաք որ բերանացի բան մը պատմեմ , կը խոստանամ : Խօսիլը նուազ երկիւղ կը պատճառէ ինծի , խօսելուն մէջ գրական ձեւ ելն . չպահանջուելուն , որով նաև ծիծաղելի բլլալու վախը չունենալուս համար :

Խանդավառութեամբ որոշուեցինք այս գաղափարը եւ նոյն իսկ հետաքրքրուած՝ առաջնութիւնը իրեն տուինք :

—Ինծի ինկած թուղթին վրայ , սկսաւ խօսիլ , նորավէպ մը գրել կ'առաջարկուէր : Նորավէպը կարծեմ չի՞նծու կ'ըլլայ ընդհանրապէս : Այդ տաղանդը կը սկսի ինձմէ :

Հետեւաբար պատմելիքս իրական դէպք մըն է եւ զոր պիտի պատմեմ կէտ առ կէտ :

«Տարի մը առաջ էր , Յունվարին մէջ , շաբաթ օր մը , կամուրջէն կ'անցնէի Գուսգարուի կողմը երեկոյթի մը երթալու համար :

«Յանկարծ դէմս ելաւ կարպիսը որուն հետ դպրոցէն ետքն ալ կրցած ենք բարեկամ մնալ :

«—Ո՛ւր , կարպիս , հարցուցի , ի՞նչ ըրիր նայինք , յաջողեցա՞ր Ջուրի Ընկերութեան մէջ մտնելու :

«—Չէ՛ , Լեւոն... դեռ չը կրցայ... երկու ամիս է կ'աշխատիմ կոր :

«—Բայց , եղբայրս , ըսի , եթէ ուրիշ գործի մը ձեռք գարնես ի՞նչպէս կ'ըլլայ... թերեւս յաջողիս :

«—Է՛ն մեծ վափաքս այս է . Ջուրի ընկերութեան մէջ պաշտօն մը ունենալ , բայց պարապ տեղ չի կայ եղեր ու յաջողիլը շատ դժուար է : Աղօթէ՛ , Լեւոն , որ յաջողիս... :

«Աչքերը լիցուեցան այս խօսքերը ըսած ատեն : Չորս քոյր ունէր ան որոց ինքը եղբայր ու հայր էր միանգամայն , անոնք դեռ աշխատելու տարիքը չունենալուն համար :

«—Յաջողութիւն կը մաղթեմ , կարպիս , ըսի ու ձեռքը սեղմելով հեռացայ :

«Կամուրջին ծայրը հասեր էի արդէն , երբ անձրեւի կաթիլ մը զգացի դէմքիս վրայ... Ա՛յ թշուառական , ձմեռուան արեւէն խաբուելու չէ եղեր... Ու անձրեւը վայրկեանաբար սկսաւ սառտկանալ... Եւ սկսայ քայլերս արագացնել... Յանկարծ ձայն մը :

«—Լեւոն... Լեւոն... :

«Կարպիսն էր որ վազելով ետեւէս հասեր էր :

«—Ա՛ռ , Լեւոն , սա հովանոցս , գոչեց շնչասպառ , նա՛ , մեղք են հագուստներդ... :

«—Է՛ , դուն ի՞նչ պիտի ընես... :

«—Ե՛ս , օ՛ , ես կամուրջէն անդին անցնելուս պէս բան մը կ'ընեմ , ասկէ զատ... հոգդ մի՛ ընես... :

«Եւ ականջիս մօտենալով ,

«—Անձրեւի պէտք ունին հագուստներս՝ քիչ մը նորնալու համար... :

«Ու մինչ անձրեւը հիմա ուժգնութեամբ հովանոցս կը ծեծէր , ետիս դարձայ ու տե-

սայ Կարպիսը որ ժաքէթին օծիքները վեր դարձուցած՝ յամրաքայլ կը յառաջանար անձրեւին տակ :

«Խեղճ, բարի՛ Կարպիս, Աշխատասէր՝ ահա այսչափ կարելի է. բայց ո՞ւր է յաջողութիւնը: Նկարչութեան տաղանդ ունէր դպրոցին մէջ. անկէ չի կրցաւ շահիլ, եւ հիմա գործ մը գտնելու ալ չէ՛ր յաջողեր: Պատճառ. Որովհետեւ ազնիւ էր... բարի էր... Ազնիւ ու բարի անձերը միայն դիպուածով թերեւս... յաջողին: Յաջողութիւնը ապուշ ու անպարկեշտ անձերու տուած է կոյր բաղդը:

«Այս մտածումներս չոգեկառքին մէջ ալ շարունակուեցան ու պղտորեցին երեկոյթի մէջ անցունելիք գեղեցիկ ժամերուս կանխազգաց հրճուանքը:

«Եւ տխրութեամբ կը դիտէի բաց պատուհանէն անձրեւը որ տեղատարափ կ'իջնէր անդադար, ու կ'երեւակայէի Կարպիսը որ թերեւս դեռ անձրեւին տակն էր...

«Օ՛հ, ի՞նչ դառն բան է սիրական բարեկամի մը չկարենալ օգնելը անոր թշուառութեան մէջ...

Կառախումբը կանգ առաւ այս պահուս վար իջայ: Ու ճամբան մինչ կ'երթայի սաստկատարափ անձրեւին տակ, դեռ մտալուզուած էի բարեկամիս համար ունեցած տպաւորումէս:

«Երեկոյթը նկարագրել չէ՛ նպատակս որ թէեւ մինչեւ առտու տեւեց, բայց չի կրցայ զուարճանալ:

«...Հետեւեալ օրը Կարպիսին տունը գացի:

« Խիստ օգտակար եղաւ հովանոցդ, Կարպիս, շնորհակալութիւն... »

«Կարպիս զարմացումով սկսաւ հովանոցին նայիլ:

«—Որո՞ւնն է որ այս հովանոցը:

«—Քուկդ չ'... երէկ քեզմէ չառի՞:

«—Կատակ կ'ընես կոր Լեւոն... բայց սա հովանոցին կոթը միայն թերեւս իմա է... նոր էր իմ հովանոցս... նայէ՛, ալ պատուեր է աս... »

«Դիտեցի ալ որ հովանոցը չատ հին էր:

«—Է՛հ, ուրեմն երեկոյթին տունէն փոխուած ըլլալու է. ես վաղը կ'երթամ կը փոխեմ:

«Յաջորդ օրը նախ գործով մը Բերա ելայ՝ հովանոցը Կալաթա հօրս խանութը ձգելով ինչու որ գարշելի կերպով հին երեւնալուն համար կ'ամշնայի ձեռքս առնել Բերայի մէջ:

«Մեծ փողոցէն գացած պահուս, կ'ըրոպացի մը դէմ կայնելով սկսաւ հետս խօսիլ Ֆրանսերէն լեզուաւ...

«—Պարո՛ն, արդեօք սխալմամբ հովանոցնիդ փոխուած է:

«—Այո՛, պարոն. Ձերն է արդեօք:

«—Այո՛, իմա է, խնդրեմ, ո՞ւր է...

«Հինգ վայրկեանէն կրնամ ձեզի բերել. սակայն ո՞ւր կը գտնուիք:

«—Ես հո՛ս, Ձուրի Ընկերութեան մէջ Chef de bureau եմ... սպասեմ ուրեմն... »

«Քանի մը վայրկեան վերջ, հովանոցը ձեռքս, Ձուրի Ընկերութեան գրասենեակը մտայ:

«Մարդը հեռուէն զիս տեսնելուն պէս քովս վազեց ու գրէթէ հովանոցը ձեռքէս քաշելով:

«—Իմ սիրելի՛ հովանոցս, բացազանչեց՝ Ու գուրգուրանքով հովանոցը ձեռքը բռնած՝ հիացումով վրան նայիլ սկսաւ:

«—Ձէք գիտեր, պարոն թէ հովանոցս իր վերերեւումով որքա՛ն զիս երջանկացուց:

«Կամաց կամաց կ'սկսէի կասկածոտիլ թէ արդեօք այս մարդը քիչ մը փախուկ էր: Ի՞նչպէս կ'ըլլայ որ նոր հովանոցը կը յանձնէ — որովհետեւ իրաւ ալ նոր է եղեր Կարպիսին հովանոցը — եւ իր պատուած հովանոցը գտնելուն համար ասանկ կը հրճուի: Նոյն իսկ եթէ նոր ըլլար՝ ա՛յդքան թանկագին բան մըն է հովանոց մը:

«—Ուրախութիւնս չափ չունի, պարոն, ու պիտի խնդրէի ձեզմէ որ ինծի հետ ճաշելու պատիւը չզլանայիք ինձ. ճիշդ կէս օր է...

«Chef de bureau մը փախուկ չէր կրնար ըլլալ սակայն... Այս գաղափարը զիս քիչ մը ապահովեց ու, թէեւ չա՛տ ապշած, բայց կարծես թէ մազնիսացած՝ այդ մարդէն չը կրցայ չընդունիլ իր հրաւերը:

«Քանի մը վայրկեանէն ճաշարան մտանք: Մարդուն դէմքը ուրախութեամբ կը փայլէր միշտ:

«Ճաշել սկսանք ու կերածնիս ոռոզել

Պոռտոի գինիով զոր մարդը բերել տուաւ ի պատիւ ինծի:

«—Կը ներէ՞ք ինծի, Պարոն, երբ ըսեմ թէ չեմ յիշեր կոր ձեր դէմքը. և սակայն մինչեւ առտու ինչպէ՞ս կ'ըլլայ որ ձեզի նշմարած չըլլամ...»

«—Մինչեւ առտու... ի՞նչ ըսել է...»

«—Հա՛, դուք աւելի կանուխ մեկնեցաք երեկոյթէն...»

«—Երեկոյթ կ'ըսէք... ի՞նչպէս երեկոյթ...»

«—Բայց, պարոն, երեկոյթին տունը չէ՞ր որ փոխուեցաւ ձեր հովանոցը...»

«—Երեկոյթ ելն. չեմ գիտեր... սխալմունքը չորգեկառքին մէջ միայն տեղի ունեցաւ, ըստ որում ես ալ հովանոցս ըռածին վրայ դրած էի... ու տեսէք կոթերուն նոյնութիւնը...»

«Պոռտոն իր ազդեցութիւնը սկսած էր ընել, ու սկսանք խնդալ...»

«—Կ'ենթադրեմ սակայն որ ըսաւ մարդը գաւաթ մըն ալ պարպելով, դարմացաք ու հետաքրքրուեցաք այն խանդավառութեան համար զոր ունեցայ այս հովանոցս գտնելով հովանոց մը՝ որուն գործածութիւնը ամօթ իսկ է, կը մտածէք: Բայց չէ՞ք կարծեր որ ուրախութիւնս պատճառ մ'ունենայ...»

«—Պատճառ մը անպատճառ ունի, Պարոն, և դայն ձեզի չհարցնելս պարզապէս չհամարձակելս է...»

«—Ուրեմն կ'ուզէ՞ք որ քանի մը բառով պատմեմ...»

«—Այնքան՝ որքան սա պահուն բան մը չպիտի ուզէի...»

«—Հինգ տարի կ'ընէ անկէ ի վեր. օր մը իրիկուան դէմ ճամբան գացած ատենս յանկարծաթափ անձրեւ մը այնքան սաստկօրէն տեղալ սկսաւ որ մէկ վայրկեանի մէջ ջուրը մարդուն ոտի տակէն կ'անցնէր: Ինծմէ քանի մը քայլ առջեւէն օրիորդ մը կ'երթար որ հովանոց չունենալուն համար վազել սկսաւ, ես ալ ետեւէն վազեցի հակառակ երկչոտ քնաւորութեանս և խնդրեցի որ չմերժէ հովանոցս: Քանի մը վայրկեանս այս անձանքով ուղիս հետ քով քովի քալեցինք, երբ բաժնուեցայ իրմէն, զգացի թէ խնդրի պէս սիրահարուած էի անոր, ես որ կը խնդայի սիրահարուողներուն վրայ: Ինչ որ կ'ըսեմ՝ հշտարութիւն է. Շաբաթ մը

ետքը նշանուեցայ և ամիս մը ետքը հետը ամուսնացայ: Հիմա կ'ինս է ան. ասկէ աւելի երջանիկ ամուսնութիւն երեւակայելն անհնար է: Ու այս հովանոցին է որ կը պարտինք մեր ներկայ երջանկութիւնը...»

«Առեղծուածը լուծուած էր...»

«—Անկէ ի վեր, շարունակեց, պիթիթէկին վերջին պատառը ուտելով, անկէ ի վեր ամէն տարի ճիշտ այն օրը որ այդ էակը ճանչցայ. հովանոցը բացած այդ ճամբայէն կ'անցնինք շնչելով մեր ամբողջ երջանկութիւնը: Եւ կը հաւատա՞ք, ամէն անգամուն ալ կը պատահի որ անձրեւոտ ըլլայ այդ օրը: Արդ, այսօր է այդ օրը... այս երեկոյ իսկ...»

«Ու բաժակները պարպեցինք իրենց երջանկութեան շարունակութեանը ու հովանոցին կենացը...»

«—Ուրեմն իրաւունք չունի՞մ եզեր, տեսէք, խանդավառուելուս: Կ'ինս երկու օրէ ի վեր տխրած էր. որքա՞ն պիտի ուրախանայ այս իրիկուն: Է՛հ, ձեզի երախտապարտ եմ, պարոն Լեւոն, — հիմա ա՛լ անունս գիտէր — ըսէք թէ ի՞նչպէս կ'ընամ Ձեզ օգտակար ըլլալու հաճոյքը վայելել...»

«Ժամէ մ'ի վեր կարպիսին վրայ կը խորհէի ու հիմա առիթը եկած էր...»


«Պարոն, ըսի, նախ որ եթէ երախտագէտ մնացող մը պիտի ըլլայ անպատճառ, անիկա նախ ես եմ, յետոյ՝ իմ բարեկամներէս մին՝ որուն կը վերաբերի այս հովանոցը...»

«Եւ պատմեցի ես ալ իմ հովանոցիս պատմութիւնը ծայրէն ծայրը...»

«—Սմենայն սիրով, գոչեց երբ խօսքս աւարտեցի, վաղն իսկ ձեր բարեկամը թո՛ղ հոս գայ. անմիջապէս պաշտօն մը պիտի ունենայ հոս...»

«Կարպիսը հոն լաւ պաշտօն մը ունի հիմա, ու մասուրնքի մը պէս կը պահէ իր հրաշագործ հովանոցը...»

Ս. ԲԱՐԵԼԵԱՆ



ԱՄՈՒՍՆԱԼՈՅԾՆ ԱՊԵՐՋԱՆԻԿ

ԳԻՒՂԱՎԷՊ

Մասն Ա.

4

ՈՒՆՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Գիւղին փեարաւոր ժամկոչն ու ժամացոյցը, դրախտին ոսկեկառար խօսնակն՝ աքաղաղ՝ սրաշփնդ արծաթ ձայնովն աւետած է դիշերուան վերջին պահը: Ոստանն համօրէն ընդօստ կը դարձնուէ անընտ քունէն: Մեղուաջան գործունէութիւնն ամենուրեք կը բզկայ, կը գեւայ, ցալաքաղ ծերունիէն սկսեալ մինչեւ արտոյտերամ մանկոին աւելնող խայտանօք կայտառացած: Մառանէն մինչեւ մսուր, յարկէ յարկ հեւուն հապճեպ մը կ'երթեւեկէ: Տանտիկիները անսակ մը հարսնեւոր, և այրերն առ հասարակ տեսակ մը փեսաւէրներ, պչրուն պերճանքի և ճողփուն ճախանքի շաղկապն անոնցմէ մէն միոյն դէմքն ու կերպարանքն արտասովոր կը պճնազարդէր: Պառաւերն իրենց պոկունքի համրիչ ազօթքները կը դաշեն դանդաշտ երեմտութիւններով, լորձունքոտ փռգտումներով, որոց մէջէն ո՛րքան անգամ Աստուած, Յիսուս, Առաքեալք, Մարգարէք, Սուրբք ու Սրբուհիք կ'անցնին կը դառնան: Խարխիւր վեր առնող և մեկնիլ սկսող չոգենաւու մը ծանելոյցին պէս՝ ամէն բուխերիկ կը մխայ, գիշերուան վերջին խնկոտ ամպին հետ խառնելով իր առաջին ճենճերոտ մառախուղը: Արշալոյսն այնինչ վարդաւառած է հորիզոնին մթնշաղ ճակատը, տաճարին դռներէն զանգակն արդէն գոռացած է իր հրաւէրն հաւատացելոց: Ամէն տուն պարպուած է: Կը չուէ ահա ուխտաւորաց մեծաթափոր կարաւանը:

Ստանցիք աշխարհի ամէնէն աւելի ուխտասէր ժողովուրդն էին, որովհետեւ աշխարհի բոլոր ժողովուրդներէն աւելի շատ ուխտատեղի ունէին:

Ստանի մէջ ո՛ւր որ կոխէ մարդ, հոն Սուրբ մը կամ Սրբուհի մը, Մարգարէ մը, Աւետարանիչ մը, Առաքեալ մը, Հայրապետ մը յիշատակ մը ու յիշատակարան մը ունի: Տեսակ մը մատուռ է հոն՝ Ստան գիւղին մէն մի քարը, աղբիւրը, լիճը, գետը, գերեզմանը, թուփը, անտառը, որոց մէն մին զատ զատ պաշտուած Սուրբ մը, Սրբուհի մ'ունի: Եւ այնքան ջերմեռանդ են որ դեռ կը հաւատան թէ իրենց կիներն ու աղջիկները Աստուածածնայ ցեղէն են, թէ Մագթաղինացին Ստանցի է եղբր, թէ Յիսուս իրենց գիւղն այցելեր է, թէ այն քանի մը նկանակներն ու ճուղներն՝ որով Բրիտանոս մէկ քանի հազար անօթի ժողովուրդներ կերակրեց, կտացուց, իրենց փռան հացէն և իրենց դետէն առնուած են: Թէ Աստուած իրենց ծառերու չուքին տակ հանգչած ատեն Եհովան անոր յայտնուեր է: Թէ Պետրոս Առաքեալ առաջին եկեղեցին իրենց երկրի անխարխալ ժայռերէ միոյն վրայ հաստատեր է, ց'վերջին դատաստան անկողնակի մնալու համար, թէ Աստուած առաջին անգամ մարդոց հետ խօսելու համար՝ երկինքէն հոն իջեր և աշխարհի բոլոր խելքերն ու իմաստութիւններն իրենց կտակ ու ժառանգ թողեր է: Թէ Դանիէլ Մարգարէ իրենց երկրին մէջ խոր վիրաւոր կամ առիւծներու գուրը ձգուեր է, թէ Իսահակայ տեղ՝ երկինքէն զրկուած խոյը իրենց նախնեաց ծառերուն մէկէն կախուեր է: Թէ Սամսոն իրենց երկրացի մէկ իշուն ծնօտովը այնքան կղակներ ջարդեր է, թէ երկրի վրայ՝ Աստուծոյ և թագաւորին համար, գերազանցապէս հլու հաւատարիմ հպատակ իրենք են միայն: Սոյն պարզամիտ ու աւելորդապաշտ հաւատքովն է որ այն ուխտագնացութիւնը կը կատարեն, գեղջուկ աւանդամուլութեան մը համաձայն թէ Ադամ և Եւա քարոյ և չարի դիտութեան ծառին ստուղը ուտելէն եւ դրախտէն աքսորուելէն վերջ, իրենց Ստան գիւղն եկեր են. և զղջալու համար, կամ Եղեմին յիշատակն ու Աստուծոյ հաճելի լինելու բարեպաշտութիւնն յաւերժացնելու համար, այսօրուան ուխտատեղին համարուած Ադամայ Զորն և Եւայի պարտէզը հաստած, հաստատած են: Այսքան միամիտ և այսքան մեծահա-

ւատ ժողովուրդ մէ, որ միահամուռ կը դիմէ յուխտ և յերկրպագութիւն Ս. Տեղեաց իրեն սրբազան գլուխ ունենալով Տէր Տաթեւը, որ իր ամենօրեայ անապատականի քուրճն ու քուրջն իր վրայէն նետած, պատարագւոր Հայրապետի մը փառաշուք ու ոսկեհամուկ զգեստներով փերեթուած, կը հրամայէ ու կը պատուիրէ իր ուխտագնաց ժողովուրդին, որպէս ուխտաւոր թափորին ալ կը նախագահէ Տիրօ նահապետ, որ այսօր իր թաղիքէ գղակը գարգմանակի փոխած, քաշելէ և ձիավարելէ աւելի կ'օգտաւորէ:

Շարունակելի

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

(Շարունակելի դասեր ամեն քիւի մեջ)

Հողին բոլոր պահանջումներուն և մանաւանդ անոր դիրքին համեմատ պէտք է հերկել, Աւելի պատշաճ է դուր (à plat) հերկել, այսինքն՝ կարելի եղածին չափ հորիզոնական (հարթ հաւասար) թողլով հողը, ամէն անգամ որ արտը թոյլատու է, վասն զի լաւագոյն հերկն այս է: Դուր հերկելով, արտին բովանդակ մակերեւոյթը կը մշակուի, և ամէն տեսակ մշակական գործիքներու յարմար կուգոյ, մանաւանդ հընձող գործիքներու, և վերջապէս կը նպաստէ սերմին աւելի հաւասարապէս ցրուելուն: Բայց դուր հերկումը միահարթ մակերեւոյթ ունեցող, թեթեւ և թափանցելի գետիններու միայն կրնայ ծառայել. ապա թէ ոչ անձրեւին ջուրերն արտին երեսը կրնան մնալ և մեծ վնաս տալ հունձքին:

Իսկ կուռ ու անթափանցելի հողերու համար ուրիշ դրութիւն մը կ'ընդունուի, այսինքն՝ կա՛մ ածու ածու (en planches տախտակ տախտակ) բաժնելով կը հերկեն եւ կա՛մ արօրով հողագօտիներ (billon) կը ձեւացնեն:

Տախտակ տախտակ հերկելով, արտը հասար լայնութեամբ ածուներու կը բաժնեն, իրարմէ զուգահեռական խորունկ ափսներով (raie) զատուած: Հողին խոնաւութիւնն ափսներէն կ'երթայ փոքրիկ առուակներ ձեւացնելով: Հերկելու այս կերպը ափսներուն բովանդակ մակերեւոյթն անբեր թողելու անպատեհութիւնն ունի սակայն:

Գօտի գօտի հերկումն ալ նպատակ ունի գիւրացնել հողին երեսը մնացող ջուրերուն հոսումը, որք մօրանալով կրնան մեծապէս վնասել հունձքերուն: Այս եղանակն ալ ի գործ կը դրուի անթափանցելի ներք նահող ունեցող գետիններուն համար, եւ կը կայանայ արտը աւելի կամ պակաս լայն լեզուներու բաժնել, բայց փոխանակ զանոնք հորիզոնական թողելու, անոնց մէջտեղը տեսակ մը փոքրիկ բլուր կը ձեւացնեն, որոյ կորընթարդութեան (convexité) վրայէն պիտի սահին ջուրերը, երթալու համար փոքր ձորակներու մէջ որք կազմուած են մէն մի գօտի միջեւ: Ջուրերուն հոսման վերապահուած մասը նոյնպէս անբեր կը մնայ:

Երբ հող մը յոգնած է, մեծ ոյժ, կորով մը կուտան անոր՝ խորունկ հերկում ի գործ դնելով, այսինքն՝ գութանով սովորականէն շա՛տ աւելի խորունկ կը հերկեն ներքնահողի խոր խաւերը վերքերելու համար, որք արգասաւորիչ նոր տարրեր կը բերեն բուսահողին: Ասոնք պարարտութեանց հետ խառնուելով և մթնոլորտային ազդեցութեանց ենթարկուելով, պիտի կրնան արտին գօրութիւնը նորոգել և մինչեւ իսկ կերպարանափոխ ընել դայն օգտակարապէս:

Հերկելէ վերջ, հողակոշտերը կը քրքրեն ու կը հարթեն ցաքանով և լողքարով: Ցաքանն իր ախաւներով փոքր մասնիկներու կը բաժնէ հողը, որոնց մէջէն արմատները դիւրութեամբ ճամբայ պիտի բանան եւ իրենց սնունդը պիտի դոնեն: Լողքարը կը ճմլէ հողին զիմահար գուղձերը (կոշտ բունձ) և կը փոշիացնէ զանոնք: Ասկէ զատ, լողքարը կը պնդացնէ փխրուն (դիւրափշուր) հողերը, նյութն ալ նորածիլ արմաթներու վրայէն կ'անցընեն զայն կա՛մ չափազանց շուտ աճումը թուլցնելու, և կա՛մ

արմատներն ամրապնդելու և անոնց նոր ընձիւղներ (talle, ջով) արձակել տալու համար:

ՅԱՆՔ կամ ՎԱՐՈՒՅԱՆ (SEMAILLES)

Մշակութեան մը յաջողութիւնը մեծապէս կախում ունի ցանքի ատեն տարուած խնամքներէն: Չի բաւեր հողը լաւ պատրաստել, և պատշաճ ու բաւական քանակութեամբ աղբել դայն, պէտք է նաեւ որ հողին յանձնուած հունարը լաւ ընտրուած ու տեսակով աղէկ ըլլայ. պէտք է որ կորովի բոյսերէ յառաջ եկած, հասուն, ողջ ու մաքուր ըլլայ:

Մշակուած միեւնոյն տեսակն յաճախ բազմաթիւ պէսպիսութիւններ կը ներկայացնէ. այսպէս է արմոխքներուն, մանաւանդ ցորենին համար: Հոս գործնականը միայն կրնայ ցոյց տալ թէ ո՞ր տեսակը կը յարմարի այսինչ հողին, այնինչ դաւառին մէջ: Բայց երբ անգամ մը տեսակն ընտրուի պէտք է որ հունարը զատուի իր պարունակած մոլաբոյսերու հունտերէն: Ձանաղան զատիչ գործիքներ հնարուած են հունար մաքրելու համար*: Այս մասին մշակները միշտ պէտք եղածին չափ հոգածու չեն. մանաւանդ Անատոլիոյ մէջ. ոմանք հոգ չեն տանիր իրենց սերմնոցուն մաքրելու, ոմանք ալ թէեւ կը մաքրեն, բայց միացորդները աղբին մէջ կը նետեն, այնպէս որ ագարակին մէջ զատուած հունտերը վերստին դիւրար կը գտնեն արտերուն մէջ՝ աղբին հետ: Յանքը կը կատարուի կա՛մ հունարը ձե-

* Հունտերը զատելու յատուկ գործիքներուն մէջ յիշատակելի է trieur [զատիչ] կոչուածը: Ասիկա փայտէ շինուած քառասանի գործիք մ'է. իր վրայ ունի ծագար մը [trémie] որոյ մէջ կը դրուին հունտերը: Զագարին ներքեւ կը գտնուի զան մը, որ աստիճանաւոր մաղերէ կը բաղկանայ: Հունտերը ծագարէն կ'անցնին նրորաւոր զանին մէջ, որ բռնակով մը կը դառնայ: Հունտերը մաղերուն մէջէն կ'անցնին իրենց խոշորութեան համեմատ եւ մաղերուն տակ գրուած տաշտիկներուն մէջ կ'իյնան: Այս գործիքը ո՛չ միայն զիւրին է շինել, այլեւ արժան է. պէտք է որ ամէն հողագործ ունենայ անկէ:

աւաք սփռելով և կա՛մ մեքենական սերմնացանով (semoir mécanique) տողան տողան ցանելով: Սերմնացանը մեծ առաւելութիւններ կ'ընծայէ, որովհետեւ նախ սերմը միշտ կանոնաւոր հեռաւորութեամբ կ'իյնայ հողին մէջ, և երկրորդ՝ սերմին երրորդ մասը կը խնայուի: Ասկէ զատ, մոլաբոյսերու քաղահանքն ալ դիւրին կ'ըլլայ: Սերմնացանին թերութիւնը սա է որ սուղ է, և ասոր համար է որ դեռ մուտ գտած չէ Փոքր Ասիոյ մէջ շատ տեղ: Արուեստական մարգագետիններու համար սերմնացան չի գործածուիր, որովհետեւ հունարը խիտ առ խիտ պէտք է սփռել:

Խորութիւնն՝ ուր կը թաղուի հունարը, շատ մեծ կարեւորութիւն ունի: Եթէ հունարը հողին մէջ շատ խորունկ թաղուի, չի կրնար օդ առնել, դէշ կը ծլի, և ամէն պարագայի մէջ շատ ժամանակ կը կորսընցընէ լոյսին հասնելէ առաջ, բան մը որ կ'ուշացնէ անոր հասունութիւնը: Փորձուած է որ մէկ սանդիմէթր խորութեամբ թաղուած հունար մը կանոնաւոր աճում կ'ունենայ և կորովի բոյս մը կը դառնայ. իսկ 7 սանդիմէթր խորութեամբ թաղուած հունար մը դժուար աճում կ'ունենայ և տկար բոյս մը կ'ըլլայ: Սակայն փորձառութիւնը ցոյց առած է թէ, որպէս զի հունար մը ծլելու համար լաւագոյն պայմաններու մէջ գրտնուի, պէտք է որ իր միջին տրամագծէն հինգ անգամ խորունկ թաղուի:

ՓՈՐՁ. — Սերմին ծլական զօրութիւնը գիտնալու համար, փորձուելիք սերմէն 100 հատիկ կ'առնենք եւ անոնցմէ իւրաքանչիւրը կը զննիր խիստ ծակոտիէն աղիւսի մը խողոցներուն եւ կամ կտոր մը գածի վրայ փորուած խորշերու մէջ, Յետոյ զաճը կամ աղիւսը ջրով լեցուն պնակի մը մէջ կը զննենք, այնպէս որ ջուրին մակերեսոյն հասնի մինչեւ աղիւսին կամ գածին ծանծրութեան կէտը: Եթէ այս ամսողջը տաք տեղ մը պահենք, բոլոր առողջ սերմերը պիտի ծլին: Եւթմ սերմերը կը համրենք, եւ այսչափ տա հարիւր քանակութիւնը ցոյց կուտայ սերմին ծլական կարողութիւնը, եւ հետեւապէս կը հասկցուի թէ այդ սերմէն ո՞րչափ քանակութեամբ պէտք է ցանել:

Արտագրութիւն. — ԱՐՄԱՆ ԼՈՒՍԻՆՅԱՆ

ԳՐՊԱՆԻ ԲԱՌԳՐԻՈՅԿ

ՖՐԱՆՍԱՀԱՅ

Դին 5 Ղրուշ

800 փոքրագիր երեսներէ բաղկացած սիրուն գրքոյկ մը, որ 13—14,000 բառերու ու ներու եւ ընթանական ասացուածներու հաւաքոյթ մ'է եւ Ֆրանսերէն ուսանողներու անբաժան ընկերը: Գնեցե՛ք մէկ մէկ օրինակ եւ ձեր զաւկին ձեռքը տուէ՛ք, վստահ ըլլալով որ այդ գրքոյկ պիտի սրէ անոր ուսման փափակը: 10 օրինակ մէկէն առնողին 30 առ 100 զեղչ: Դիմեցե՛ք միայն Հանրագիտակի Տնօրէնութեան:

Պատկերազարդ Աշխարհագրութիւն

ՊՕԶԱՃԵԱՆ

Դին 4 Ղրուշ

Լոյս տեսաւ Ն. Պերպէրեան մատուր տպագրութեամբ, քաղ. վերջին փոփոխութեանց եւ Կրթական ծրագրին համաձայն: Մայրաքաղաքիս է՛ն կարեւոր դպրոցներն անմիջապէս ընդունեցին զայն իրենց դասագրոց ցանկին մէջ:

Փետրեմբերէ 1900ի տպագրուածը, որ 203 էջերէ կը բաղկանայ, եւ իր պարունակած պատկերներով, գիտական, առեւտրական եւ ցեղային ծանօթութիւններով, աշխարհագրութեան Ա. դասագիրքը կը հանդիսանայ եւ արժանի է ամէն ուսուցչի ուսուցչութեան:

Հանրագիտակի Տնօրէնութիւնը կը հայրայրէ մեծամանակ 30 առ 100 զեղչով:

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՕՐԷԻՑ

Կրէկուառ Ղազարօթ եւ Ընկ.

Պատիւ ունինք ծանուցանել թէ վաճառատունս փոխադրուած է Սասըգիէ խան քիւ 1 եւ 2: Եւրոպոյ բոլոր կեդրոններուն հետ իր ունեցած յարաբերութեանց շնորհիւ, բարձր դերու անհուն պէտքերով ինքն իր միտք պատրաստ ունի մեծամանակ, ինչպէս նաեւ տնտեսական համբաւ վայելող եւրոպացի բժիշկներու մասնագիտական պատրաստ դեղերը ու ամէն տեսակ հանգային ջուրերը: Գաւառներէ եղած յանձնարարութիւնք հեղիւ ու փութով կը կատարուին, անմիջեւ կերպիւ ածանց գնեցով:

Դիմեցե՛ք եւ պիտի համոզուիք:

ԿԱՌԵՒՈՐ ԱԶԴ.— Հանրագիտակի կողքին երեք էջերը ծանուցմանց յատկացուած են: Անոնք որ կը հաճին մէկ տարեկան բաժանորդագրուիլ, կրնան իրենց ծանուցումները ՉՐԻ հրատարակել տալ, 10 ական տող, 5 անգամուան համար. իսկ 50 տող մէկ անգամուան համար:

Բաժանորդագրութիւնք կ'ընդունուին, եռամսեայ, վեցամսեայ եւ տարեկան:

ՄԵՐ ՀԱՍՏԷՆ

«Հանրագիտակի» վերաբերեալ ամէն գրութիւն պէ՛տք է ուղղել Նեան Պերպէրեան տպարանը, Էսֆի զապթիէ ճասճէսի քիւ 61, առ Տնօրէնութիւն եւ Խմբագրութիւն «Հանրագիտակի»

ՌՕՍԻԱ-ROSSIA

Ա Պ Ա Հ Ո Վ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ն

ՅՐԴԵՅԲ, ԿԵԱՆԲ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆԲ, ԱՐԿԱԾԲ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին	34,775,642 ֆրանք
Երաշխաւորութեան գումար	121,765,333 »
1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած	164,172,000 »

Կեդրոնացեղի, Բարափին վրայ, Մաքսան հին սեղը

Ընդհ. Բննիչ
Ա. ՀԻՒՐՄԻՒՋ

Ընդհ. Դործակալ
ԹԷՈՏՈՐ ՌԷՐԲԷՆ



Է Ք Ի Թ Ա Պ Լ

(ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ)

ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏ ԵՒ ԱՄԵՆԷՆ ՀՁՈՐ

ԿԵԱՆԲԻ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԹ ՄԵԿ ՄԻԼԻԱՌ 339 ՄԻԼԻՈՆ ԿՐԱՆՔ

1898ին՝ ԷՔԻԹԱՊԼ իր ապահովագրեալներուն բաժնած է աւելի քան 15³/₄ ՄԻԼԻՈՆ ֆրանք շահաբաժին

[Այսինքն նոյն տարւոյ մէջ ֆրանսական ՄԻԱՅԵԱԼ 17 ընկերութեանց բաժնած շահերու համագումարին գրեթէ կրկինը]:

Ախարհիս մէջ գտնուող ոչ մէկ ընկերութիւն

ԷՔԻԹԱՊԼԻ չափ գործառնութիւն ունի

ԷՔԻԹԱՊԼԻ չափ պահեստի գրամ ունի

ԷՔԻԹԱՊԼԻ չափ շահաբաժին կը վճարէ

Հետեւաբար ոչ մէկ ընկերութիւն կրնայ աւելի ԱԺԱՆ եւ աւելի ՇԱՀԱՒԷՏ ընծայել կեանքի ապահովագրութիւնը՝ որքան ԷՔԻԹԱՊԼ:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍԵՂԱՆԱՒՈՐՔ

Լոնտոն

Անգղիոյ պանքա

Բարիզ եւ Կ. Պոլիս, Գրէտի Լիոնէ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԹՈՒՐԲԻՈՑ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Կ. Պոլիս, Պաշտէ Գաբու, Անանիատի Խան